

**Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող՝ 94/2/ԵՀ հրահանգը փոփոխելու մասին
Հանձնաժողովի 2003 թվականի հուլիսի 3-ի 2003/66/ԵՀ հրահանգը կենցաղային
սառնարանների, սառցարանների և դրանց համակցումը հանդիսացող սարքերի
էներգապիտակավորման վերաբերյալ (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող
տեքստ)**

Պաշտոնական տեղեկագիր 170 , 09/07/2003 թ., էջ. 0010 - 0014

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

Հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

Հաշվի առնելով «Կենցաղային տեխնիկայի կողմից սպառվող էներգիայի և այլ ռեսուրսների
վերաբերյալ՝ պիտակավորման և արտադրանքի մասին ստանդարտ տեղեկությունների
միջոցով նշում կատարելու մասին» Խորհրդի 1992 թվականի սեպտեմբերի 22-ի 92/75/ԵՏՀ
հրահանգը, մասնավորապես դրա 9 և 12-րդ հոդվածները,

Քանի որ

1) Սառնարանների, սառցարանների և դրանց համակցումը հանդիսացող սարքերի կողմից
էլեկտրականության օգտագործումը կազմում է համայնքի կենցաղային էներգիայի
պահանջարկի զգալի մասը: Այս տեխնիկայի կողմից օգտագործվող էներգիայի կրճատման
հետագա ծավալները կարևոր են,

2) Հանձնաժողովի 94/2/ԵՀ(2) հրահանգով և Եվրոպական պառլամենտի ու Խորհրդի 1996
թվականի սեպտեմբերի 3-ի «Էներգաարդյունավետության պահանջները կենցաղային
էլեկտրական սառնարանների, սառցարանների և դրանց համակցումը հանդիսացող
սարքերի» (3) մասին 96/57/ԵՀ հրահանգով ներմուծված պիտակավորման սխեմայի
հաջողությունը հանգեցրել է նոր սառնարանների և սառցարանների արդյունավետության
ինդեքսի ավելացմանը 1996-ից 2000թվականների ժամանակահատվածում 30 % -ով,

3) 2000 թվականին վաճառված տեխնիկայի մոտ 20 %-ը պատկանում էին
ամենաարդյունավետ դասակարգին՝ Ա-ին, իսկ որոշ շուկաներում մասնաբաժինը ավելի
քան 50 % էր: Ա դասի տեխնիկայի շուկայում մասնաբաժինը արագորեն աճում է:
Հետևաբար անհրաժեշտություն կա երկու լրացուցիչ դասակարգեր ներմուծել, A+ և A++,

որպես միջանկյալ միջոց մինչև իրականացվի էներգապիտակավորման դասակարգերի համընդհանուր վերանայումը,

4) էներգաարդյունավետության պիտակավորման ազդեցությունը կանհետանա կամ կվերանա, եթե ավելի արդյունավետ դասակարգեր չսահմանվեն,

5) ուստի, պետք է համապատասխանաբար փոփոխություններ կատարել 94/2/ԵՀ հրահանգում, Միևնույն ժամանակ հնարավոր կլինի այդ հրահանգը համապատասխանեցնել վերջերս ընդունված նմանատիպ հրահանգներին, որոնք կիրարկում են 92/75/ԵՏՀ հրահանգը,

6) քանի որ սույն Հրահանգով նախատեսված միջոցառումները համապատասխանում են 92/75/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածի համաձայն ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Սույնով 94/2/ԵՀ հրահանգում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. 1-ին հոդվածի 2, 3 և 4 պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

"2. Սույն Հրահանգով պահանջվող տեղեկատվությունը ձեռք է բերվում Եվրոպական ստանդարտներ մշակող մարմինների (ՍԵԿ, ՍԵՆԷԼԵԿ, ԵՀՍԻ) կողմից Հանձնաժողովի պարտականությունների շրջանակում՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 98/34/ԵՀ հրահանգի(4) համաձայն, որոնց հղման համարները հրապարակվել են Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում և որոնց համար անդամ պետությունները հրապարակել են ներդաշնակեցված ստանդարտները փոխատեղող ազգային ստանդարտների հղման համարները:

3. I, II և III Հավելվածների դրույթները, որոնք պահանջում են աղմուկի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, կիրառվում են միայն այն դեպքում, երբ այդ տեղեկատվությունը պահանջվում է անդամ պետությունների կողմից Խորհրդի թիվ 86/594/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածի համաձայն: Այդ տեղեկատվությունը պետք է գնահատվի այդ հրահանգի համաձայն:

4. Սույն Հրահանգում օգտագործվում են 92/75/ԵՏՀ հրահանգի 1(4) հոդվածում նշված հասկացությունները»:

2. 8. 2-րդ հոդվածը փոփոխել հետևյալ խմբագրությամբ՝

(ա) 1 պարբերությունում հետևյալ ենթապարբերությունն է ավելացվում «Երբ որոշակի մոդելի համադրության վերաբերյալ տեղեկատվությունը ձեռք է բերվել նախագծման արդյունքների հիման վրա և (կամ) այլ համակցություններից արտարկումից ելնելով, փաստաթղթերը պետք է ընդգրկեն նման հաշվարկների և (կամ) արտարկումների և իրականացված հաշվարկների ճշգրտությունը ստուգող փորձաստուգումների մանրամասները (շահագործումը հաշվարկող մաթեմատիկական մոդելի մանրամասները և չափումները, որոնք իրականացվել են այս մոդելը ստուգելու համար):

(բ) 5-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

"5. Երբ սարքավորումներ են առաջարկվում վաճառքի, վարձակալության կամ տարաժամկետ վաճառքի համար տպագրված կամ գրավոր նյութերի միջոցով կամ այլ միջոցներով, ինչպես գրավոր առաջարկը, էլ. փոստով պատվերների կատալոգը, ինտերնետով կամ էլեկտրոնային լրատվամիջոցներով գովազդը, որոնք ենթադրում են, որ հնարավոր հաճախորդը չի կարող տեսնել սարքավորումը ցուցադրված, այդ նյութերը պետք է պարունակեն III հավելվածում նշված տեղեկատվությունը:

3. I, II, III, և V հավելվածները փոփոխվում են սույն Հրահանգի հավելվածում ներկայացված կերպով:

4. VI հավելվածը ուժը կորցրել է:

Հոդված 2

Անդամ պետությունները թույլ են տալիս ոչ ուշ քան 2004 թվականի հուլիսի 1-ը 94/2/ԵՀ հրահանգի 2(5) հոդվածում նշված պիտակների, տեղեկաթերթերի և գրավոր այլ նյութերի շրջանառությունը, որոնք պարունակում են սույն Հրահանգով վերանայված տեղեկատվությունը:

Նրանք երաշխավորում են, որ ոչ ուշ քան 2004 թվականի դեկտեմբերի 31-ը 94/2/ԵՀ հրահանգի 2(5) հոդվածում նշված պիտակները, տեղեկաթերթերը և գրավոր այլ նյութերը համապատասխանեն վերանայված մոդելներին:

Հոդված 3

1. Անդամ պետությունները պետք է ընդունեն և հրապարակեն սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ իրավական ակտերը մինչև 2004 թվականի հունիսի 30-ը: Նրանք պետք է այդ մասին անմիջապես տեղեկացնեն Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ դրույթները, դրանք պետք է պարունակեն հղում սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Անդամ պետությունները որոշում են նման հղում անելու ձևը:

Հոդված 4

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում դրա հրապարակմանը հաջորդող 20-րդ օրը:

Հոդված 5

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2003 թվականի հուլիսի 3-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Լոյոլա Դե Պալաչիո

Փոխնախագահ

(1) ՊՏ թիվ L 297, 13.10.1992թ., էջ 16:

(2) ՊՏ թիվ L 45, 17.2.1994թ., էջ 1:

(3) ՊՏ թիվ L 236, 18.9.1996թ., էջ 36:

(4) ՊՏ թիվ L 204, 21.7.1998թ., էջ 37:

ՀԱՎԵԼՎԱԾ

(1) I հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

(ա) «պիտակի վրա ծանոթագրություններ» վերնագրի տակ, վերջին նախադասությունը «NB. վերը նշվածին համարժեք պայմանները այլ լեզուներով ներկայացված են VI հավելվածում» հանվում է:

(բ) «Տպագրություն» վերնագրի տակ՝

(i) Ցուցադրումից/նկարագրությունից հետո հետևյալ տեքստը պետք է ներառել՝

«A+ և A++ սարքավորումների ինդիկատոր/ցուցանիշային տառը պետք է համապատասխանի հետևյալ նկարագրություններին և պետք է տեղադրվի A դասակարգի սարքավորումների համար A ցուցանիշի հետ միևնույն դիրքում:

>PIC FILE= "L_2002157EN.000701.TIF">

(ii) վերջնական տեքստը՝ հետևյալ բառերով սկսվող «Տպագրության ամբողջական տեղեկատվությունը տրամադրվում է «սառնարան/սառցարանի պիտակի նախագծման ուղեցույցում»... » հանվում է:

(2) II հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

4. V հավելվածում սահմանված մոդելի էներգախնայողության դասակարգը՝ արտահայտված որպես «էներգախնայողության դաս...A++ ից (ամենաարդյունավետ) մինչև G (ամենաքիչ արդյունավետ) սանդղակի համաձայն»: Երբ այս տեղեկատվությունը տրամադրվում է աղյուսակում, այն կարող է ներկայացվել այլ կերպ՝ պայմանով, որ պարզ է, որ սանդղակը A++-ից (առավել արդյունավետ) G-ն (առավել անարդյունավետ) է»:

բ) 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

8. «Սառեցված սննդի պահման խցիկների զուտ ծավալները և երբ մատչելի է սառեցված խցիկը 1(2) հոդվածում նշված չափանիշների համաձայն՝ բացառությամբ 1, 2 և 3 դասակարգերը: 3-րդ դասակարգի սարքավորումների դեպքում «սառը տուփի» զուտ ծավալը»:

գ) հետևյալ 15-րդ կետը ավելացնել՝

15. «Եթե մոդել է արտադրվում սարքում տեղադրվելու համար, ապա դրա մասին պետք է նշվի»:

դ) վերջին ծանոթագրությունը հանվում է:

(3) III հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

դ) վերջին ծանոթագրությունը հանվում է:

(4) V հավելվածում «ԵՆԵՐԳԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳ» վերնագրից հետո ավելացնել հետևյալ տեքստը՝

«ՄԱՍ 1 A+ և A++ դասակարգերի սահմանումները

Սարքավորումը կարող է դասակարգվել որպես A+ կամ A++, երբ էներգաարդյունավետության ինդեքսը՝ ալֆա (α), գտնվում է 1 աղյուսակում նշված սահմաններում:

Աղյուսակ 1

ԱՂՅՈՒՍԱԿ

Աղյուսակ 1–ում

ՀՂՈՒՄ ԳՐԱՖԻԿԱՅԻՆ

որտեղ՝

AC = սարքավորման տարեկան էներգախնայողություն (I Հավելվածի համաձայն, V ծանոթագրություն)

SC α = սարքավորման ստանդարտ տարեկան էներգախնայողություն α

SC α հաշվարկվում է

ՀՂՈՒՄ ԳՐԱՖԻԿԱՅԻՆ

որտեղ՝

Vc–ն խցիկի զուտ ծավալն է (լիտրով արտահայտված) 1 (2) հոդվածում նշված չափանիշների համաձայն:

Tc–ն խցիկի նախագծման ջերմաստիճանն է (°C–ով արտահայտված)

Ma և Na արժեքները բերվում են 2-րդ աղյուսակում և FF, CC, BI և CH արժեքները բերվում են 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

ԱՂՅՈՒՍԱԿ

Աղյուսակ 3

ԱՂՅՈՒՍԱԿ

Եթե սարքավորումը A+ կամ A++ չէ, ապա այն պետք է դասակարգվի 2-րդ մասի համաձայն:

ՄԱՍ 2. A –ից G դասակարգերի սահմանումները